ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
08.05.2025 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ
հասարակական կազմակերպության 2024 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝			
1.1 Լրիվ անվանումը			ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ
1.2 ՀՎՀՀ-ն			02709202
1.3 Գտնվելու վայրը			ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Հանրապետության 22 տար.2
1.4 Պետական գրանցման համարը			00001.
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը			2010-06-28
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)			+(374)010580032
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը			www.appa.am
1.8 Էլեկտրոնային փոստը			accounting@appa.am
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝			
Անունը	Ազգանունը		Պաշտոնը
Վաղինակ	Եղիազարյան		Գործադիր տնօրեն
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը			
ԱՊՊԱ համակարգի կարգավորում			
Սպառողների շահերի պաշտպանություն			
4 Հասարակական կազմակերպության՝			
4.1 Անդամների թիվը			7
4.2 Կամավորների թիվը			
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը			3

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	ԱՊՊԱ համակարգի կարգավորում	ՀՀ	ԱՊՊԱ ոլորտի կանոնների ընդունում և դրանց կատարման վերահսկում։ Փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների որակավորում	Ընթացքի մեջ
2	Սպառողների շահերի	ՀՀ	Օրենքով նախատեսված անձանց ապահովագրական հատուցումների վճարում և հետադարձ պահանջի կիրառում։ Սպառողների դիմում-բողոքների կարգավորում։	Ընթացքի մեջ

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1					

8. Տարեկան ելքեր՝	
8.1 Դրամական միջոցները	5,523,473,883
8.2 Դրամը	

Digitally signed by ZAKINYAN VARDUHI 7602820029
Date: 2025.05.08 16:04:01 AMT

Ընդամենը		5,523,473,883
9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ		
Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1		
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	0	
10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝		
10.1 Դրամական միջոցները		5,475,783,887
10.2 Գույքը		
Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		5,475,783,887
11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝		
11.1 Դրամական միջոցները		
11.2 Գույքը		
Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		0

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝			
Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը		0	
Նշումներ			

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____0_____ էջից
Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____
ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրություն, անունը, ազգանուն

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
հասարակական կազմակերպություն
Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Ապրիլ 2025թ.
Երևան

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության Խորհրդի կազմը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
6	Եկամտի և ծախսերի հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
9	Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
11	Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str., 5th Floor, office 7
Yerevan, Armenia

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Բյուրո) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին մաս կազմող ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բյուրոի ֆինանսական վիճակը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Բյուրոյից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան:

Մենք հավատացած ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բյուրոյի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Բյուրոն լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բյուրոյի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str., 5th Floor, office 7
Yerevan, Armenia

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք սխալի կամ խարդախության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Բյուրոի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Բյուրոի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները անբավարար են, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բյուրոին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը .
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str., 5th Floor, office 7
Yerevan, Armenia

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

29 ապրիլ, 2025թ.

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA

Տնօրեն

Դավիթ Եդիգարյան, FCCA

Գործընկեր

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության Խորհրդի կազմը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Արմեն Նուրբեկյան	խորհրդի նախագահ, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Արման Չիլինգարյան	խորհրդի անդամ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետի տեղակալ
Կարեն Չիլինգարյան	խորհրդի անդամ, «Սպառողների խորհրդատվության կենտրոն» ՀԿ նախագահ
Տիգրան Քեյան	խորհրդի անդամ, «Վարորդի ընկեր» ԻՀԿ-ի նախագահ և համահիմնադիր
Արման Դաղունց	խորհրդի անդամ, «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
Վահագն Աղավելյան	խորհրդի անդամ, «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի գործադիր տնօրենի տեղակալ
Արմինե Մելքոնյան	խորհրդի անդամ, «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի գործադիր տնօրեն

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպություն
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Եկամուտներ հիմնական գործունեությունից	5	310,348	307,295
Ծախսեր պայմանավորված հիմնական գործունեությամբ	6	(46,599)	(49,866)
Համախառն արդյունք		**263,749**	**257,429**
Եկամուտներ հիմնական միջոցների օտարումից		13	-
Եկամուտներ երաշխավորման ֆոնդերից	15	277,266	422,405
Հատուցումների գծով պահուստների ձևավորման ծախսեր	17	(432,297)	(446,486)
Ակտիվների հնարավոր կորուստների (պահուստին հատկացումներ)/ պահուստից հակադարձումներ, զուտ	15	134,435	44,536
Վարչական ծախսեր	7	(254,242)	(253,007)
Գործառնական գործունեությունից արդյունք		**(11,076)**	**24,877**
Զուտ ֆինանսական եկամուտ	8	179,722	117,848
Արդյունք մինչև հարկերը		168,646	142,725
Շահութահարկի գծով ծախս	9	(7,104)	(6,855)
Տարվա արդյունք		**161,542**	**135,870**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**161,542**	**135,870**

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 7-35) հաստատվել են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության ղեկավարության կողմից 2025թ. ապրիլի 29-ին, ստորագրությամբ՝

Վաղինակ Եղիազարյան
Գործադիր տնօրեն

Վարդուհի Զաքինյան
Ֆինանսական ծառայության
ղեկավար/Գլխավոր հաշվապահ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպություն
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	10	14,825	17,295
Վարկեր աշխատակիցներին		14,031	-
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	11	12,481	24,963
		41,337	**42,258**
Ընթացիկ ակտիվներ			
Ներդրումներ բանկային ավանդներում	13	1,765,791	1,166,262
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12	407,337	269,442
Մնացորդներ բանկերում	14	358,280	310,590
Պաշարներ		371	456
		2,531,779	1,746,750
Ընդամենը ակտիվներ		**2,573,116**	**1,789,008**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երաշխավորման ֆոնդ	15	1,370,116	753,932
		1,370,116	**753,932**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	122,661	113,697
Պահուստներ հատուցումների գծով	17	144,032	134,662
Վարձակալության գծով պարտավորություն	11	15,056	28,374
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		8,199	6,833
		289,948	283,566
Ընդամենը պարտավորություններ		**1,660,064**	**1,037,498**
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		913,052	751,510
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		**2,573,116**	**1,789,008**

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպություն
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված անդամավճարներ	248,209	245,070
Մուտքեր երաշխավորման ֆոնդ	285,020	543,617
Մուտքեր ծառայությունների մատուցումից	54,393	17,254
Մուտքեր հետադարձ պահանջներից	641,032	598,134
Այլ մուտքեր	22,097	10,520
Գործառնական գործունեությունից ելքեր		
Վճարված հատուցումներ	(427,689)	(442,281)
Վճարումներ նյութեր, ապրանքներ ձեռք բերելու համար	(59,729)	(94,672)
Վճարումներ աշխատակիցներին	(161,954)	(135,464)
Վճարումեր բյուջեին	(53,281)	(54,036)
Այլ վճարումներ	(22,402)	(12,868)
Զուտ հոսքեր գործառնական գործունեությունից մուտքեր	**525,696**	**675,274**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր ավանդներց	1,256,593	475,336
Ավանդների տեղաբաշխում	(1,715,982)	(1,055,801)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(2,537)	(684)
Զուտ հոսքերի ներդրումային գործունեությունից	**(461,926)**	**(581,149)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության գծով վճարումներ	(16,080)	(13,500)
Զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից	**(16,080)**	**(13,500)**
Բանկերում մնացորդների զուտ աճ	47,690	80,625
Բանկերում մնացորդներ տարվա սկզբում	310,590	229,965
Բանկերում մնացորդներ տարվա վարջում	**358,280**	**310,590**

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպություն
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կուտակված արդյունք	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	615,640	615,640
Տարվա արդյունք	135,870	135,870
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**751,510**	**751,510**
Տարվա արդյունք	161,542	161,542
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**913,052**	**913,052**

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպություն
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության Խորհրդի կազմը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 6
1. Բյուրոյի վերաբերյալ 12
2. Պատրաստման հիմունքներ 13
2.1 Համապատասխանություն 13
2.2 Չափման հիմքերը 13
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ 14
4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում 15
5. Եկամուտներ հիմնական գործունեությունից 18
6. Ծախսեր պայմանավորված հիմնական գործունեությամբ 18
7. Վարչական ծախսեր 18
8. Ֆինանսական եկամուտ և ծախս 19
9. Շահութահարկի գծով ծախս 19
10. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ 20
11. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն 21
12. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր 22
13. Ներդրումներ բանկային ավանդներում 23
14. Մնացորդներ բանկերում 24
15. Երաշխավորման ֆոնդ 24
16. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր 24
17. Պահուստներ հատուցումների գծով 25
18. Գործարքներ կապակցված կողմերի հետ 25
19. Պարտավորվածություններ 25
20. Պայմանական պարտավորություններ 25
21. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն 26

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպություն
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակությունը)

1. Բյուրոյի վերաբերյալ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ «Բյուրո») ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2010թ. հունիսի 28-ի թիվ 1/669Լ որոշմամբ, որպես իրավաբանական անձանց միություն: Հայաստանի ավտոապահովագրողների Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի 2017թ. նոյեմբերի 22-ի թիվ 4-Լ որոշման համաձայն Բյուրոն վերակազմավորվել է հասարակական կազմակերպության: Բյուրոյին անդամակցում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն իրականացնելու լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերությունները, որոնք Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ունեն մշտապես գործող առնվազն մեկ մասնաճյուղ կամ գործակալ և բավարարում են օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջները: Բյուրոյին անդամակցությունը կրում է կամավոր բնույթ:

2017թ. - ից Բյուրոյին անդամակցում է նաև ՀՀ կենտրոնական բանկը: 31.12.2024թ.-ի դրությամբ Բյուրոյի աշխատակիցների քանակը կազմում է 23 հոգի (2023թ.՝ 23 հոգի):

Բյուրոն շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, ինքնակարգավորվող կազմակերպություն է, որի գործունեության նպատակը տուժած անձանց շահերի պաշտպանությունն է և ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) համակարգի կայունության և զարգացման ապահովումը: Բյուրոն նպաստում է ԱՊՊԱ-ի ոլորտում անդամ ապահովագրական ընկերությունների գործունեության արդյունավետությանը, կարգավորում և վերահսկում է նրանց գործունեությունը, ԱՊՊԱ-ի ոլորտում իր անդամ ապահովագրական ընկերությունների համար մշակում է մասնագիտական վարքագծի կանոններ:

2017թ. ապրիլի 1-ից ԱՊՊԱ ոլորտում ներդրվել է ուղիղ հատուցումների համակարգը, ինչը նշանակում է, որ ավտովթարների դեպքում տուժող ավտոսեփականատերերն ապահովագրական հատուցում ստանալու համար պետք է դիմեն իրենց հետ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերություններին: Ապահովագրական ընկերությունները սահմանված կարգով կհատուցեն իրենց հետ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ավտոմեքենաների սեփականատերերին պատճառված վնասները, որից հետո վնաս պատճառած ավտոտրանսպոր-տային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունների հետ կիրականացնեն փոխհաշվարկներ՝ սահմանված չափերով հետ ստանալով իրենց կողմից հատուցված գումարները:

Բյուրոյի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության 22, տարածք 2:

Գործարար միջավայր

Բյուրոն իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք բնորոշ են զարգացող շուկաներին: Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերը ենթակա են տարբեր մեկնաբանությունների, որոնք՝ այլ իրավական և հարկաբյուջետային խոչընդոտների հետ միասին նպաստում են Հայաստանում գործող կազմակերպությունների առջև ծառացած մարտահրավերներին: Հայաստանի տնտեսության կայունությունն ու զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը վերահաստատել է իր հավատարմությունը

լավ կառավարման սկզբունքներին, այդ թվում՝ հակակոռուպցիոն, թափանցիկության և հաշվետվողականության:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են ղեկավարության գնահատականը Բյուրոյի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.2 Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող ֆինանսական գործիքների:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա) 2024թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

- Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- Վարձակալության գծով պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալություն գործարքների դեպքում (ՖՀՄՍ 16-ի փոփոխություն)
- Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1-ի փոփոխություն)
- Կովենանտներով ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1-ի փոփոխություն)

2024 թվականի հունվարի 1-ից գործող նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները էական ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

(բ) Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ, մեկնաբանությունները և փոփոխությունները

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպություն
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակությունը)

Կան մի շարք ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք թողարկվել են ՀՀՄՍԽ-ի կողմից և գործելու են ապագա հաշվետու ժամանակաշրջաններում, որոնք սակայն Ընկերությունը որոշել է վաղաժամ չընդունել:

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար:

- Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություն)
- Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.
- Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- Բնությունից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրեր (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից սկսած տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար.

- ՖՀՄՍ 18 Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում
- ՖՀՄՍ 19 Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. Բացահայտումներ:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Բյուրոն կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

Պահուստներ հատուցումների գծով

Հատուցումների գծով Բյուրոն ձևավորում է պահուստ հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների համար: Բյուրոն գնահատում է ներկայացված պահանջները "դեպք-առ-դեպք" մեթոդով:

Ապահովագրական պատահարի գծով վնասի չափը որոշվում է փորձագետների կողմից և տվյալ գնահատականը հիմք է հանդիսանում պահուստի չափը որոշելու համար: Վնասի չափի որոշման անհնարինության դեպքում պահուստը ձևավորվում է օրենքով սահմանված առավելագույն վճարվելիք հատուցման չափով:

Բյուրոն ձևավորում է նաև պահուստ այն պատահարների համար, որոնք տեղի են ունեցել, սակայն դեռևս չեն ներկայացվել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ (ՏՉՊՊ): ՏՉՊՊ հաշվարկն արտացոլում է վճարված և տեղի ունեցած վնասները, յուրաքանչյուր պահանջի գծով միջին ծախսերը, նախորդ տարիներում հետազոտված պահանջների քանակը և ակնկալվող վնասաբերության ցուցանիշները:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից:

Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների արժեքը հիմնված է ղեկավարության՝ վարձակալության ժամկետների գնահատականներից, ինչպես նաև լրացուցիչ փոխառության դրույքից, որն օգտագործվել է վարձակալության գծով վճարները զեղչելու համար: Այս վարձակալության ժամկետները համապատասխանում են պայմանագրի այն ժամանակաշրջանին, որը հնարավոր չէ չեղարկել, բացառությամբ այն դեպքերի, երբ Բյուրոն խելամտորեն վստահ է երկարացման տարբերակների օգտագործման մեջ: Վարձակալության ժամկետը գնահատելիս՝ ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր այն փաստերն ու հանգամանքները, որոնք տնտեսական խթան են ստեղծում Բյուրոյի համար վարձակալությունը երկարեցնելու տարբերակ կիրառելու նպատակով, ինչպիսիք են օրինակ՝ վարձակալության պայմանագիրը դադարեցնելու կամ նորը կնքելու ծախսերը:

Այս գործոններում փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ գնահատված վարձակալության ժամկետների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների գրանցված արժեքի վրա:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Բյուրոյի ֆինանսական հաշվետվություններում:
Բյուրոյի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- Մակարդակ 1: Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)
- Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
- Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Բյուրոն կարող է ենթարկվել ֆինանսական գործիքներին վերաբերող հետևյալ ռիսկերին՝

Բյուրոն ներգրավված չի սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Բյուրոն կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

- Պարտքային ռիսկ
- Շուկայական ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ
- Արտարժութային ռիսկ

Բյուրոն կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին:

Սույն ծանոթագրությունում ներկայացված են Բյուրոյի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Բյուրոյի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Բյուրոյի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր
- Մնացորդներ բանկերում
- Ներդրումներ բանկային ավանդներում
- Վարձակալության գծով պարտավորություններ
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր
- Պահուստներ հատուցումների գծով

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

Ֆինանսական ակտիվներ

	Ամորտիզացված արժեքով չափվող	
	2024թ.	**2023թ.**
	հազ. դրամ	**հազ. դրամ**
Ներդրումներ բանկային ավանդներում	1,765,791	1,166,262
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	407,337	246,156
Մնացորդներ բանկերում	358,280	310,590
Ընդամենը	**2,531,408**	**1,723,008**
Ֆինանսական պարտավորություններ		
Վարձակալության գծով պարտավորություններ	15,056	28,374
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	122,661	100,187
Պահուստներ հատուցումների գծով	144,032	134,662
Ընդամենը	**281,749**	**263,223**

Ֆինանսական ռիսկի գործոններ

Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Բյուրոն ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Բյուրոն գործարքները հիմնականում իրականացնում է հայկական դրամով: 2024թ. և 2023թ. ընթացքում Բյուրոն չի ունեցել արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, հետևաբար այն չի ենթարկվում արտարժութային ռիսկի:

Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բյուրոյի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բյուրոն չի ունեցել տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Բյուրոն կարող է ֆինանսական կորուստներ կրել:

Նման կորուստներից խուսափելու համար Բյուրոն ընդունել է քաղաքականություն, որի համաձայն համագործակցում է միայն վճարունակ անձանց հետ:

Բյուրոյի առևտրային դեբիտորական պարտքերի գերակշիռ մասը բաժին է ընկնում ապահովագրական ընկերություններին, ինչպես նաև մեղավոր անձանց հանդեպ հետադարձ պահանջների գծով ստացվելիք գումարներին: Պարտքերը գոյանում են անդամավճարների, պարբերական և լրացուցիչ վճարների, ինչպես նաև միանվագ վճարների արդյունքում: Նշված դեբիտորական պարտքերը իրենց մեջ գրեթե չեն ներառում պարտքային ռիսկ, քանի որ նշված ապահովագրական ընկերությունների կողմից այդ գումարների վճարումով է պայմանավորված նրանց հետագա գործունեությունը ԱՊՊԱ համակարգում:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ներդրումներ բանկային ավանդներում	1,765,791	1,166,262
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	407,337	246,156
Մնացորդներ բանկերում	358,280	310,590
	2,531,408	**1,723,008**

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

Ղեկավարության գնահատմամբ բանկերում տեղաբաշխված միջոցների՝ ներառյալ ավանդների հետ կապված պարտքային ռիսկ՝ առկա չէ, քանի որ դրանք գտնվում են հեղինակավոր առևտրային բանկերում:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Բյուրոն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Բյուրոն վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Բյուրոն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Բյուրոյի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի ստացման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 12-ում:

5. Եկամուտներ հիմնական գործունեությունից

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Եկամուտներ անդամավճարներից	248,494	245,070
Փաստաբանական ծախսերի փոխհատուցումից եկամուտներ	32,319	35,303
Փորձաքննությունների գծով եկամուտներ	16,984	16,508
Այլ եկամուտներ	12,551	10,414
	310,348	**307,295**

6. Ծախսեր պայմանավորված հիմնական գործունեությամբ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Փաստաբանական ծառայությունների համար կատարվող ծախսեր	45,664	46,158
Փորձաքննությունների իրականացման ծախսեր	252	2,966
Այլ ծախսեր	683	742
	46,599	**49,866**

7. Վարչական ծախսեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Անձնակազմի գծով ծախսեր	202,295	183,909
Մաշվածություն և ամորտիզացիա	17,820	19,400
Համակարգչային ծրագրերի սպասարկման ծախսեր	7,503	6,040
Դատական ծախսեր	6,312	20,390
Հեռահաղորդակցության ծախսեր	3,271	3,201
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	2,440	2,621
Ներկայացուցչական ծախսեր	993	3,359
Տրանսպորտային ծախսեր	908	1,057
Գովազդային ծախսեր	-	13
Այլ ծախսեր	12,700	13,017
	254,242	**253,007**

8. Ֆինանսական եկամուտ և ծախս

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ֆինանսական եկամուտներ		
Տոկոսային եկամուտ երաշխիքային ֆոնդի գումարների ներդրումից	138,036	67,001
Տոկոսային եկամուտ երաշխիքային ֆոնդի տույժերից	1,300	5,783
Տոկոսային եկամուտ հետադարձ պահանջների գծով	35,232	41,569
Տոկոսային եկամուտ անդամավճարների ներդրումից	7,926	6,024
Ընդհանուր ֆինանսական եկամուտ	**182,484**	**120,377**
Ֆինանսական ծախսեր		
Տոկոսային ծախս վարձակալության գծով	(2,762)	(2,529)
Զուտ Ֆինանսական եկամուտ	**179,722**	**117,848**

9. Շահութահարկի գծով ծախս

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ընթացիկ հարկ	7,104	6,855
	7,104	**6,855**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2024թ.		2023թ.	
	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %
Արդյունք մինչև հարկումը	**168,646**		**142,725**	
Շահութահարկ	30,356	18.0	25,691	18.0
Չհարկվող եկամուտ	(23,252)	(13.8)	(18,836)	(13.2)
Շահութահարկի գծով ծախս	**7,104**	**4.2**	**6,855**	**4.8**

10. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

. դրամ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
մնական արժեք						
թ. հունվարի 1-ի դրությամբ	49,920	14,500	15,364	5,074	25,640	110,498
լացում	312	-	372	-	-	684
սրում	(6,916)	-	(1,040)	(1,900)	-	(9,856)
թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**43,316**	**14,500**	**14,696**	**3,174**	**25,640**	**101,326**
լացումներ	367	-	868	-	1,680	2,915
սրումներ	(16,513)	-	(3,067)	(1,850)	-	(21,430)
թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**27,170**	**14,500**	**12,497**	**1,324**	**27,320**	**82,811**
ռակված մաշվածություն						
թ. հունվարի 1-ի դրությամբ	47,527	1,802	14,294	4,634	19,258	87,515
վածության ծախս	1,249	2,320	609	343	1,831	6,352
սրումներ	(6,916)	-	(1,038)	(1,882)	-	(9,836)
թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**41,860**	**4,122**	**13,865**	**3,095**	**21,089**	**84,031**
վածության ծախս	925	2,320	377	-	1,658	5,280
սրումներ	(16,513)	-	(3,041)	(1,771)	-	(21,325)
թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**26,272**	**6,442**	**11,201**	**1,324**	**22,747**	**67,986**
հաշվեկշռային արժեք						
թ. հունվարի 1-ի դրությամբ	2,393	12,698	1,070	440	6,382	22,983
թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,456	10,378	831	79	4,551	17,295
թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**898**	**8,058**	**1,296**	**-**	**4,573**	**14,825**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Բյուրոն գրավադրված հիմնական միջոցներ չունի:

Զրո հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները, որոնք դեռևս հաշվառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ունեն 40,729 հազար դրամ սկզբնական արժեք (2023թ. 61,636 հազար դրամ):

11. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն

ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվի առկա գործառնական վարձակալությունների համար Բյուրոն ընտրել է սկզբնավորման ուղղակի ծախսումները չներառել օգտագործման իրավունքի ձևով ակտիվի չափման մեջ: Այդ ամսաթվին Բյուրոն նաև ընտրել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափել անցման օրվա դրությամբ առկա վարձակալական պարտավորությանը հավասար գումարով՝ ճշգրտված բոլոր կանխավճարների կամ հաշվեգրված վարձակալական վճարների չափով:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բյուրոն, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Բյուրոն պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում օգտագործման իրավունքի ձևով ակտիվների շարժը.

Հազ. դրամ	**Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ**
Սկզբնական արժեք	
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	96,067
Վերաչափում	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	96,067
Կուտակված մաշվածություն	
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	58,057
Տարվա ծախս	13,047
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	71,104
Տարվա ծախս	12,482
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	83,586
Հաշվեկշռային արժեքը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**24,963**
Հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**12,481**

Վարձակալության գծով պարտավորություններ

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցությունը (հունվարի 1-ի դրությամբ)	28,374	19,996
Վերաչափում	-	19,349
Տոկոսի կուտակում	2,762	2,529
Վճարումներ	(16,080)	(13,500)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	**15,056**	**28,374**

12. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Երաշխավորման ֆոնդի գծով ստացվելիք գումարներ	149,201	360
Հետադարձ պահանջների գծով ստացվելիք գումարներ	320,982	327,284
Այլ դեբիտորական պարտքեր	70	18,241
Ֆինանսական ակտիվներ միջև արժեզրկում	**470,253**	**345,885**
Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	(82,515)	(99,729)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**387,738**	**246,156**
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	1,057	3,241
Տրված կանխավճարներ	18,542	20,045
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**19,599**	**23,286**
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**407,337**	**269,442**

Անդամավճարների գծով ստացվելիք գումարները վերաբերում են հաշվետու տարվա վերջին ամսվա համար ստացվելիք պարբերական անդամավճարներին, որոնք անդամների կողմից ենթակա են վճարման տվյալ ամսվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Երաշխավորման ֆոնդի գծով ստացվելիք գումարները վերաբերում են հաշվետու տարվա վերջին ամսվա համար ստացվելիք պարբերական վճարներին, որոնք անդամների կողմից ենթակա են վճարման տվյալ ամսվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հետադարձ պահանջների գծով ստացվելիք գումարները վերաբերում են Բյուրոյի կողմից արդեն վճարած հատուցումների և դրանց հետ կապված դատական ու փորձագիտական ծախսերի գծով վնասը պատճառած անձի (կամ տուժողի մեղքի առկայության դեպքում՝ տուժողի) նկատմամբ պահանջներին:

2024թ. համեմատական նվազումը պայմանավորված է ՀՀ-ում պարեկային ծառայությունների կատարման ընթացքում տուգանքների կիրառման հետևանքով, քաղաքացիների կողմից

ավտոմեքենաների պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) պայմանագրերի պարտադիր կնքման պահանջը ավելի պատասխանատու կատարելու հետ:

Այլ դեբիտորական պարտքերը ներառում են մատուցված ծառայությունների դիմաց ստացվելիք գումարները:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Վերոնշյալ գումարների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 21-ում:

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Խմբային հիմունքով ստեղծված պահուստի գումարը կազմում է 82,515 հազար դրամ (2023թ.՝ 99,729 հազար դրամ):

Ակտիվների հնարավոր կորուստների պահուստի շարժը ներկայացված է ստորև.

	2024թ.	**2023թ.**
	հազ. դրամ	**հազ. դրամ**
Տարեսկզբի մնացորդ	99,729	174,589
Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին զուտ հատկացումներ/ (հակադարձումներ)	(155,023)	(44,536)
Զուտ դուրսգրումներ	137,809	(30,324)
Տարեվերջի մնացորդ	**82,515**	**99,279**

2024թ. ընթացքում հնարավոր կորուստների պահուստին զուտ վերականգնումներ/ (հատկացումները) ներառում են հետադարձ պահանջների գծով ստացվելիք գումարների գծով վերականգնումներ 155,023 հազար դրամ (2023թ. 24,081 հազար դրամ ծախսեր): (Ծանոթ. 15)

Առևտրային դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը: Հետևաբար, ղեկավարությունը հավատացած է, որ ստեղծված դեբիտորական պարտքի պահուստից զատ լրացուցիչ պահուստ չի պահանջվում:

13. Ներդրումներ բանկային ավանդներում

Ավանդները ներդրված են մեկ տարի և ավելի ժամկետով, և պարբերաբար երկարաձգվում են, սակայն հիմնականում չեն գերազանցում 12 ամիսը: Ավանդների միջին տոկոսադրույքը կազմում է 10.02% (2023թ.՝ 10.2%):

	2024թ.	**2023թ.**
	հազ. դրամ	**հազ. դրամ**
Ժամկետային ավանդներ բանկերում	1,765,791	1,166,262
	1,765,791	**1,166,262**

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, բանկային ավանդների մնացորդները ներկայացված են առանց 17,732 հազ. դրամ ակնկալվող պարտքային կորուստի պահուստի:

14. Մնացորդներ բանկերում

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Հաշիվներ ՀՀ առևտրային բանկերում	358,254	310,564
Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում	26	26
	358,280	**310,590**

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, մնացորդները բանկերում ներկայացված են առանց 3,682 հազ. դրամ ակնկալվող պարտքային կորուստի պահուստի:

15. Երաշխավորման ֆոնդ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Մնացորդը տարվա սկզբում	753,932	306,650
Մուտքեր երաշխավորման ֆոնդի հաշվին	436,586	412,992
Մուտքեր հետադարձ պահանջներից	456,872	456,695
Երաշխավորման ֆոնդի օգտագործում, այդ թվում՝		
Վերականգնումներ/ (հատկացումներ) հետադարձ պահանջների գծով պահուստին	155,023	24,081
Հատկացումներ հատուցումների գծով պահուստներին	(432,297)	(446,486)
Մնացորդը տարվա վերջում	**1,370,116**	**753,932**

Երաշխավորման ֆոնդում միավորվում են Բյուրոյի՝ հավաքագրած միջոցները, Բյուրոյի անդամների կողմից կատարված միանվագ, պարբերական և լրացուցիչ վճարները, օրենքով սահմանված կամ օրենքով չարգելված այլ ձևերով ներդրված միջոցները:

Բյուրոյի կողմից ներկայացված, բայց չվճարված պահանջների և տեղի ունեցած, սակայն չվճարված հատուցումների գծով ծախսերով ձևավորվող պահուստի ձևավորմանը, ինչպես նաև հետադարձ պահանջների գծով պահուստին հատկացումներին զուգընթաց, երաշխավորման ֆոնդից կատարվում է եկամուտի ճանաչում:

16. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին հանդեպ	16,813	14,900
Առևտրային կրեդիտորական պարտքեր	89,846	85,287
Ընդամենը ֆինասական պարտավորություններ	**106,659**	**100,187**
Ստացված կանխավճարներ	7,521	5,597
Կրեդիտորական պարտքեր բյուջեին (բացառությամբ շահութահարկի)	8,481	7,913
Ընդամենը ոչ ֆինանսական պարտավորություններ	**16,002**	**13,510**
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**122,661**	**113,697**

17. Պահուստներ հատուցումների գծով

Հատուցումների գծով պահուստի շարժը հետևյալն է.

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Մնացորդը տարվա սկզբում	134,662	124,396
Պահուստի գծով ծախս երաշխավորման ֆոնդից	432,297	446,486
Օգտագործում	(422,927)	(436,220)
Ընդամենը ֆինասական պարտավորություններ	**144,032**	**134,662**

18. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Բյուրոյի կապակցված կողմերը ներառում են ՀՀ կենտրոնական բանկը, որը հանդիսանում է Բյուրոյի միակ հիմնադիրը և հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև.

Հաշվետու տարվա ընթացքում Բյուրոյի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ստացված անդամավճարներ ՀՀ կենտրոնական բանկից	245,070	245,070

Մնացորդներ	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Դրամական միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում	26	26

Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրություն

Ստորև ներկայացվում է առանցքային ղեկավար անձնակազմի կողմից տարվա ընթացքում ստացված վարձատրությունը.

	2024թ. հազ.դրամ	2023թ. հազ.դրամ
Աշխատավարձ, պարգևատրումներ և այլ հատուցումներ, ներառյալ հարկերը	69,877	67,044

19. Պարտավորվածություններ

Իրավական պարտավորվածություններ

Բյուրոյին ներկայացվող դատական հայցերի առումով Բյուրոյի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով կարող է կրել կորուստներ, ուստի դրանց գծով ստեղծել է պահուստներ:

20. Պայմանական պարտավորություններ

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Բյուրոն չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Բյուրոյի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Բյուրոն համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Բյուրոյի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

21. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով գործարքներ Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Բյուրոյի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում: 2024 և 2023թթ. ընթացքում Բյուրոն չի ունեցել արտարժութային գործարքներ:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ: Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է եկամտում կամ ծախսում: Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման

ծախսումները, ճանաչվում են եկամտում կամ ծախսում՝ կատարվելու ժամանակաշրջանում: Մաշվածությունը ճանաչվում է եկամտում կամ ծախսում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, շինություններ և փոխանցվող հարմարանքներ	20 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	3 տարի
Այլ հիմնական միջոցներ	5 տարի

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Բյուրոյի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է եկամտում կամ ծախսում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրերի համար:

Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Բյուրոն դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Բյուրոն գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Բյուրոյին,
- Բյուրոն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Բյուրոն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Բյուրոն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Բյուրոն որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Բյուրոն պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Բյուրոյի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Բյուրոն հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի

օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Բյուրոն նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Բյուրոն չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Բյուրոյի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը նվազեցվում է կատարված վճարումների և մեծացվում տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ եկամտում կամ ծախսում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Բյուրոն կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են եկամտում կամ ծախսում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Բյուրոն սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունները ներկայացվել են առանձին տողով:

Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

Ֆինանսական գործիքներ

Ճանաչում, սկզբնական չափում և ապաճանաչում

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպություն
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակությունը)

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Բյուրոն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը

Հետագա չափումն իրականացնելու համար ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, սկզբնական ճանաչման ժամանակ բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:
- մնացորդներ բանկերում

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են տարվա արդյունքում, թե այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Բյուրոյի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 4-ում:

Ընդհանուր առմամբ, Բյուրոյի բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են տարվա արդյունքում և ներկայացվում են «Ֆինանսական ծախս» և «Ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

i. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը:

Երաշխավորման ֆոնդի պարբերական վճարների և Բյուրոյի անդամավճարների գծով ստացվելիք գումարները ճանաչվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱՄՊՊ տեղեկատվական համակարգում՝ նշված վճարների հաշվարկների համար հիմք հանդիսացող՝ ավտոմատ ձևավորվող հաշվետվության հիման վրա:

Հետադարձ պահանջների գծով ստացվելիք գումարները, որոնք բացի Բյուրոյի կողմից նախկինում վճարված հատուցումների գծով պահանջներից, ներառում են նաև տվյալ հատուցումների կարգավորման համար իրականացված դատական և փորձագիտական ծախսերի դիմաց ստացվելիք փոխհատուցումները, ճանաչվում են այն ժամանակ, երբ օրենսդրության համաձայն Բյուրոն ստանում է հետադարձ պահանջի իրավունք վճարված հատուցման գծով:

Դեբիտորական պարտքի ճանաչման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

- Երբ վնաս պատճառած անձը հայտնի է.
- Երբ վնաս պատճառած անձն անհայտ է, սակայն հայտնի է տրանսպորտայի միջոցի սեփականատերը:

Մնացորդներ բանկերում

Մնացորդները բանկերում ներառում են բանկային հաշիվների մնացորդները ՀՀ կենտրոնական և առևտրային բանկերում:

ii. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները:Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Բյուրոյի ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

Ավանդները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ի լրումն, եթե առկա է ավանդների արժեզրկման օբյեկտիվ ապացույց, ֆինանսական ակտիվը չափվում է գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքով: Ավանդների հաշվեկշռային արժեքի ցանկացած փոփոխություն ճանաչվում է եկամտում կամ ծախսում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և հետագա չափումը

Ֆինանսական պարտավորությունները ներառում են՝

- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը
- Պահուստները հատուցումների գծով

i. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս

տարվա արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ տարվա արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով տարվա արդյունքում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Բյուրոն սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Բյուրոն սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են պարտքային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում: Այդ խմբերի նկատմամբ կիրառվում են

կորուստի գնահատված ցուցանիշներ, հիմնված նախորդ տարիների պատմական կորուստների վրա:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի տարվա արդյունքում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Գործընկերոջ հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

Զուտ ակտիվներ

Բյուրոյի զուտ ակտիվները կազմված են միայն ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված արդյունքից:

Երաշխավորման ֆոնդ

Երաշխավորման ֆոնդը ձևավորվում է Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների կողմից կատարված միանվագ, պարբերական և լրացուցիչ վճարներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ վճարներից:

Երաշխավորման ֆոնդի միջոցները եկամուտ են ճանաչվում այն ժամանակաշրջանում, երբ կատարվում են հատուցումների ուղղությամբ ծախսեր կամ ձևավորվում են հատուցումների համար նախատեսված պահուստներ:

Պահուստներ հատուցումների գծով

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Բյուրոն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

Չկարգավորված պահանջների պահուստ

Բյուրոն ստեղծում է չկարգավորված պահանջների պահուստ, որը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ տեղի ունեցած, բայց դեռևս չվճարված պահանջների գծով գնահատված վերջնական ծախսումների վրա, անկախ նրանից ներկայացված են, թե՝ ոչ, ինչպես նաև համապատասխան պահանջների գծով կարգավորման ծախսերի վրա, հանած ներկայացված հետադարձ պահանջները և այլ վերականգնումները: Որոշ պահանջների ծանուցման կամ կարգավորման առումով կարող են լինեն հետաձգումներ, հետևաբար այս պահանջների վերջնական արժեքը չի կարող հստակորեն որոշվել հաշվետու ամսաթվի դրությամբ: Նման պահանջների համար Բյուրոն ձևավորում է Տեղի ունեցած, բայց չներկայացված պահանջների պահուստ (ՏՉՊՊ):

Պարտավորություններն ապաճանաչվում են, երբ օրենքով սահմանված պարտավորությունները կատարվում են կամ երբ դադարում են:

Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի՝ հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր

տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Բյուրոն կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Բյուրոն հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների հաշվառման հիմքեր Բյուրոն չի ունեցել:

Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի Բյուրոն ազատվում է շահութահարկի վճարումից Երաշխավորման ֆոնդին կատարվող բոլոր վճարների, ինչպես նաև Երաշխավորման ֆոնդի օգտին ստացված բոլոր այլ գումարների մասով, ներառյալ այն եկամուտների մասով, որոնք ստացվել են Երաշխավորման ֆոնդի միջոցներից կատարված ներդրումներից:

Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

(գ) սոցիալական ապահովության մասհանումները և այլ սոցիալական վճարներ:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Բյուրոյին մատուցում են ծառայություններ, Բյուրոն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Բյուրոն պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպություն
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակությունը)

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Բյուրոն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Բյուրոն վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

Հասույթի ճանաչում

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Բյուրոն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով

1) Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2) Բացահայտել կատարման պարտականությունները
3) Որոշել գործարքի գինը
4) Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5) Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Բյուրոն բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Բյուրոն ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Բյուրոն բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Բյուրոնը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Երաշխավորման ֆոնդ

Երաշխավորման ֆոնդի միջոցները եկամուտ են ճանաչվում այն ժամանակաշրջանում, երբ կատարվում են հատուցումների գծով ծախսեր կամ ձևավորվում են հատուցումների համար նախատեսված պահուստներ, ձևավորում են ակտիվների արժեզրկման ծախսեր:

Անդամավճարներից եկամուտ

Անդամավճարներից եկամուտները ճանաչվում են գծային մեթոդով՝ այն ժամանակաշրջանի ընթացքում, որոնց վերաբերում են անդամավճարները:

Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները Բյուրո վճարում են միանվագ և պարբերական անդամավճարներ: Միանվագ անդամավճարը Բյուրո վճարվում է Բյուրոյին

անդամակցելու օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Պարբերական անդամավճարները վճարվում են ամսական կտրվածքով՝ տվյալ ամսվա վերջին օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում, պարբերական անդամավճարը լրիվ չափով կատարվում է նաև այն ամսվա համար, որի ընթացքում ապահովագրական ընկերությունը դարձել է Բյուրոյի անդամ:

Տոկոսներից եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 08.05.2025 16:02